



Այս ֆաղափականությամբ անհառների դահողանությունը մենք բարձրացնելու ենք նոր մակարդակի

Անտառների միջազգային օրվա առթիվ Անտառային պետական կոմիտեն կազմակերպել էր միջոցառում՝ ներկայացնելով կոմիտեի կողմից մշակված՝ անտառային ոլորտի զարգացման եռամյա ծրագրի հիմնական ուղղությունները: Բնապահպանության նախարարության համակարգում նոր ստեղծված Անտառային պետական կոմիտեի նախագահ Միքայել Մանուկյանը նշեց, որ ՀՀ նախագահի և կառավարության կողմից անտառների պահպանությունը, քայքայված ռեսուրսների վերականգնումը, անտառածածկ տարածքների վերականգնումը, եղած պաշարների շարունակական և արդյունավետ օգտագործումը համարվել են գերակա խնդիրներ: Նրա խոսքով՝ վերոնշյալ աշխատանքների կատարման համար արդեն իրականացվել և իրականացվելու են մի շարք օրենսդրական ու ինստիտուցիոնալ բարեփոխումներ: «Անտառային ոլորտի խնդիրները բազմաբնույթ են, իրականացվելիք ծրագրերը՝ ճշգրտված: Անտառների վերականգնման, պահպանության ուղղությամբ տարվող աշխատանքներ միշտ են կատարվել: Մենք ընտրել ենք այնպիսի ուղի, որդեգրել այնպիսի քաղաքականություն, որով հնարավոր լինի առավելագույնս լուծել ոլորտի առջև ծառայած



խնդիրները: Անտառների կայուն կառավարման և պահպանության ոլորտում ներդրվելու են առավել արդյունավետ մեխանիզմներ և գործիքակազմ, որոնց շնորհիվ հնարավոր կլինի անել այն, ինչ մինչ այժմ անկատար էր կամ թերի կատարված», - ասաց Մանուկյանը:

• Այս ֆաղափականությամբ անտառների դահողանությունը մենք բարձրացնելու ենք նոր մակարդակի

Սկիզբը էջ 1 /



Ըստ նրա՝ ճիշտ գիտակցելով անտառների մշանակությունը, հաշվի առնելով այն, որ անտառները կենսոլորտի կարևորագույն օղակներից մեկն են, չպետք է ջանք խնայել անտառների կայուն կառավարման և պահպանության համար: Մանուկյանի հավաստմամբ՝ անտառի պահպանմամբ է պայմանավորված առողջ կենսակերպի ապահովման հարցը: «Գնահատում ենք ոլորտով հետաքրքրված միջազգային և հասարակական կազմակերպությունների կատարած աշխատանքը և ակնկալում ավելի լայն համագործակցության շրջանակ: Նախատեսված ծրագրերի իրականացման ուղղությամբ պատրաստակամ ենք քննարկել անտառային ոլորտի բարելավմանն ուղղված ցանկացած առաջարկ: Աշխատելու ենք թափանցիկ և տեսանելի բոլորի համար: Ոլորտի առջև դրված անելիքները հստակեցված են, բարեփոխումների մեկնարկը՝ տրված», - ասաց նա: Մանուկյանի խոսքով՝ իրենք վստահ են իրենց ուժերի վրա և իրականացնելու են իրենց առջև դրված խնդիրները, այն է՝ պահպանել և սերունդներին փոխանցել առողջ, ավելի մեծ անտառածածկ տարածքներ: Գյուղատնտեսության նախարարին իր երախտիքի խոսքը հայտնելով՝ նա հավելեց, որ ոլորտում բարեփոխումների շրջանակը սկսվել է, երբ «Հայաստան» ՊՈԱԿ-ը գյուղատնտեսության նախարարության կազմում էր: Նա նշեց, որ 2018-ի Անտառների միջազգային օրվա թեման կրում է «Անտառները և կայուն քաղաքներ» խորագիրը: Նախարարի կարծիքով՝ այսօր ևս մեկ անգամ հնարավորություն է ընձեռվում խոսելու ոլորտում առկա խնդիրների մասին՝ անտառների պահպանության, զարգացման և վերարտադրման մասին: Նրա հավաստմամբ՝ անտառների պահպանությունը, պաշտպանությունը և վերարտադրությունը մշտապես գտնվում են կառավարության ու բոլորի ուշադրության կենտրոնում: «Իհարկե, այդ խնդիրների լուծման ուղղությամբ նախարարությունն ակտիվորեն համագործակցել է մի շարք միջազգային կազմակերպությունների հետ, մասնավորապես՝ Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության, ԲԲԼՍ-ի համաշխարհային հիմնադրամի, ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի, ՄԱԿ-ի Պարենի և գյուղատնտեսության կազմակերպության հետ: Նրանց անմիջական մասնակցությամբ պայմանավորված են եղել նաև մեր հաջողությունները: Պետք է նշել, որ նախարարությունը միշտ կարևորել է թափանցիկ աշխատանքը և սեր-

տորեն համագործակցել նաև ոլորտում գործունեություն ծավալող ՀԿ-ների հետ և նրանց կողմից ստացել մշտական աջակցություն», - ասաց նախարարը: Նրա խոսքով՝ իրենց համար, որպես գերական խնդիր, միշտ եղել է միջազգային չափորոշիչների համահունչ անտառների բնապահպանական, սոցիալական և տնտեսական արժեքների պահպանումն ու հավասարակշռումը, կայուն կառավարման ապահովումը: Այդ ուղղությամբ մեկ տարի առաջ գյուղատնտեսության նախարարությունը մշակեց և շրջանառության մեջ դրեց անտառային ոլորտի բարեփոխումների հայեցակարգին, ռազմավարությանը և միջոցառումների ցանկին հավանություն տալու՝ կառավարության արձանագրային որոշման նախագիծը, որը հաստատվեց 2017-ի նոյեմբերին: Իսկ 2017-ի դեկտեմբերին ՀՀ նախագահի հրամանագրով բնապահպանության նախարարության համակարգում ստեղծվեց Անտառային պետական կոմիտեն: Առաքելյանը, դիմելով Բնապահպանության նախարար Արծվիկ Մինասյանին, նշեց. «Փաստորեն, պարոն Մինասյան, կարող ենք արձանագրել՝ անտառը հանձնեցի, անտառն ընդունվեց»: Բնապահպանության նախարար Արծվիկ Մինասյանը, իր խոսքում կարևորելով անտառների դերը, նշեց, որ անտառը կյանքի աղբյուր է, կյանք ստեղծելու միջավայր, ի վերջո, անտառը կյանք է: Նա իր երախտիքի խոսքն ուղղեց բոլոր նրանց, ովքեր իրենց ներդրումն են ունեցել Հայաստանի անտառների պահպանության գործում: «Կարևոր է երկու գերատեսչությունների՝ գյուղնախարարության և բնապահպանության նախարարությունների համագործակցությունը, որպեսզի մենք կարողանանք անտառների կայուն կառավարման ոլորտում ոչ միայն գյուղատնտեսության, այլ նաև մեր տնտեսության բոլոր մնացած ճյուղերը տեղափոխել դեպի կայուն անտառակառավարման դաշտ: Այս հարցում Բնապահպանության նախարարությունն ամբողջությամբ պատրաստ է մեր միջազգային գործընկերների հետ, ինչպես նաև հանրային սեկտորի ու մասնագիտացված կազմակերպությունների հետ իրականացնել, ներկայացնել և կյանքի կոչել այն ծրագրերը, որոնք կապահովեն անտառների առավել արդյունավետ պահպանությունը», - ասաց բնապահպանության նախարարը:

շարունակությունը էջ 3 /

• Այս ֆաղափականությամբ անտառների դահողանությունը մենք բարձրացնելու ենք նոր մակարդակի

Սկիզբը՝ էջ 2 /

Նրա խոսքով՝ «անտառների պահպանությամբ զարգացում» սկզբունքը լինելու է իրենց անտառային քաղաքականության հիմքում, և հատուկ պահպանվող տարածքները, անտառներն ամբողջությամբ գործելու են այս սկզբունքի ներքո: «Ես լիահույս եմ, որ մեր այս քաղաքականությունը համարժեք աջակցություն կստանա միջազգային դոնոր կազմակերպությունների կողմից: Մենք ստեղծելու ենք քաղաքականության մշակման վարչություն՝ անտառային, հատուկ պահպանվող տարածքների և կենսամվտանգության մասով, որովհետև մեզ անհրաժեշտ է քաղաքականության մշակումը, անտառային կոմիտեի ակտիվ ներգրավմամբ, բարձրացնել մի նոր մակարդակի՝ ներգրավելով մեր բոլոր գործընկերներին», - ասաց Սինասյանը: Նրա խոսքով՝ Հայաստանի կենսաբազմազանությունն անտառային համակարգի շուրջ 80 տոկոսն է, այսինքն՝ կենսաբազմազանության 80 տոկոսից ավելին գտնվում է հենց անտառներում: Հետևաբար, ըստ նախարարի, իրենց քաղաքականության առանցքում լինելու է նաև կենսաբազմազանության պահպանությունը, որը մեր երկրի, պետության հիմնական հարստություններից է: Սինասյանը խոսքն ամփոփեց՝ ասելով, որ ոլորտում առանց պատշաճ պահպանության չեն կարող զարգացում ապահովել: Բնապահպան

Կարինե Դանիելյանի գնահատմամբ՝ շատ կարևոր է, որ Անտառային կոմիտեն այժմ բնապահպանության նախարարության կազմում է, քանի որ անտառի հիմնական ֆունկցիան շրջակա միջավայրի ստեղծումն է: Սակայն, ըստ նրա, այնպես չէ, որ միայն բնապահպանության նախարարությունը պետք է բոլոր խնդիրները լուծի, սա կառավարության, ժողովրդի գործն է, և միայն համատեղ ջանքերով կարող ենք հասնել արդյունքի: «Հույս ունեմ, որ չեմ տեսնի պատկերներ, թե ինչպես են պոչամբարները խժռում անտառները. Թեղուտի բացասական փորձը մեզ համար դաս կլինի: Շատ կարևորում եմ, որ էկոլոգիական մշակույթը մեզանում զարգանում է, և մենք պետք է հասկանանք, որ անտառը միայն փայտը չէ, անտառը միայն կենսաբազմազանությունը չէ, այլ մեր ամբողջ երկրի կյանքի հիմքն է: Կարևորում եմ նաև այն ռազմավարությունը, որ մշակել է բնապահպանության նախարարությունը, և հույս ունեմ, որ այն, իրոք, կսկսի գործել, քանի որ այսօր, ցավոք, էկոլոգիական մշակույթը մեզանում ցածր մակարդակի է», - ասաց բնապահպանը: Նշենք նաև, որ միջոցառման ավարտին բարեխիղճ աշխատանքի համար Անտառային պետական կոմիտեի նախագահ Միքայել Մամուկյանը պատվոգրեր շնորհեց կառույցի մի շարք աշխատակիցների:

«Շրջակա միջավայրի դահողանության և բնական ռեսուրսների օգտագործման կառավարման ռազմավարությունը» արժանացավ Կառավարության լիակատար հավանությանը



Բնապահպանության նախարար Արծվիկ Սինասյանի ներկայացմամբ գործադիրն այսօր հավանության է արժանացրել «Շրջակա միջավայրի պահպանության և բնական ռեսուրսների օգտագործման կառավարման ռազմավարությունը և միջոցառումների ծրագիրը»: Շրջակա միջավայրի և բնական ռեսուրսների համալիր պահպանությունը, բարելավումը, վերականգնումը և ողջամիտ օգտագործումը, ոչ միայն կարևոր նախապայման է մարդու և բնության ներդաշնակ գոյակցության, այլև երաշխիք երկրի կայուն զարգացման համար: Ներկայում գործող օրենսդրական հենքի կատարելագործման խնդիրն արդիական է, քանի որ այն չի ապահովում բնապահպան

ության ոլորտի այնպիսի գործընթացների կարգավորումը, ինչպիսիք են շրջակա միջավայրի և բնական ռեսուրսների համալիր պահպանությանն ու կայուն օգտագործմանն ուղղված համալիր պլանավորման, բնական ռեսուրսների միասնական մոնիթորինգի իրականացման, ժամանակակից տեխնոլոգիաների կիրառմամբ հաշվառման ու կադաստրների վարման, միասնական տեղեկատվական համակարգերի կառավարման ու շրջակա միջավայրի և բնական ռեսուրսների բոլոր բաղադրիչները միմյանց հետ շաղկապված վիճակի գնահատման գործընթացները:

շարունակությունը՝ էջ 4 /

• «Շրջակա միջավայրի դահողանության և բնական ռեսուրսների օգտագործման կառավարման ռազմավարությունը» արժանացավ Կառավարության լիակատար հավանությանը

Սկիզբը էջ 31

Ռազմավարական բնապահպանական գործողությունների ծրագիրը նախատեսում է բնապահպանական քաղաքականության գործիքների համակարգված փաթեթ, այն առավել համակարգված կդարձնի բնապահպանական և բնօգտագործման ոլորտում առկա և առաջիկա բնագավառային գործողությունների ծրագրերը, կանդիդատներ խնդիրների լուծմանը, ինչպես նաև հաշվի կառնի ՀՀ միջազգային պարտավորությունները՝ բնապահպանության ոլորտում: Ռազմավարությունում մանրամասն դիտարկվել են շրջակա միջավայրի բաղադրիչներ հանդիսացող հողերը, կենսաբազմազանությունը, ներառյալ՝ անտառները և բնության հատուկ պահպանվող տարածքները (ԲՀՊՏ-ներ), ջրային ռեսուրսները, մթնոլորտը: Ռազմավարությունը կստեղծի շրջակա միջավայրի պահպանության, վերականգնման, բարելավման համար համապատասխան պայմաններ, ինչպես նաև կապահովի անցումը կայուն զարգացման՝ ներկա և ապագա սերունդների պահանջներին և պահովման համար: Մասնավորապես.

- կկատարելագործվի շրջակա միջավայրի պահպանության նորմատիվա-իրավական դաշտը, այդ թվում կնախատեսվի էկոլոգիապես արդյունավետ տեխնոլոգիաների ներդրման նպատակով տնտեսվարող սուբյեկտների տնտեսական խթանման միջոցները,
- կծնվի շրջակա միջավայրի պահպանության ոլորտի կառավարման արդյունավետ՝ ներառելով միջազգային ստանդարտները, համակարգը,

• կնպաստի խախտված էկոհամակարգերի վերականգնմանը, ինչպես նաև ավելի մատչելի կդարձնի շրջակա միջավայրի վիճակի մասին տեղեկատվության ապահովումը և միջազգային համագործակցության զարգացումը:

Շրջակա միջավայրի բոլոր բաղադրիչները (մթնոլորտ, ջուր, հող, ընդերք, բուսական և կենդանական աշխարհ, ինչպես նաև դրանց առնչությամբ ձևավորվող միջավայրերը) որպես ամբողջականություն, կլինեն պետության ներսում կայացվող որոշումների (տնտեսական, քաղաքաշինական, սոցիալական, մշակութային և այլն) առանցքում:

Շրջակա միջավայրի պահպանության և բնական ռեսուրսների օգտագործման հիմնախնդիրների լուծման և միջազգային հնարավորությունների արդյունավետ իրացման համար կարևորվում է շրջակա միջավայրի և բնական ռեսուրսների պահպանության, վերականգնման և ողջամիտ օգտագործման պետական կառավարման միասնական համակարգի ձևավորումը՝ Բնապահպանության նախարարության հենքի վրա: Բնապահպանական գործունեության իրավիճակի բարելավումը բնապահպանական քաղաքականության իրականացման միջոցով կստեղծի բնօգտագործման և շրջակա միջավայրի պահպանության ոլորտում կառավարման տարբեր մակարդակներում նպատակների հասանելիություն ապահովող միջոցառումների ամբողջական համակարգի առկայություն:

Նախագծերի մշակումը ղայմանավորված է եղել նաև Բնադահողանության և ընդերքի ժեշակաան մարմնի սեղծմամբ



2018 թվականի մարտի 19-ին ՀՀ բնապահպանության նախարարի տեղակալ Խաչիկ Հակոբյանը ՀՀ Ազգային ժողովում ներկայացրել է մի շարք օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքների նախագծեր, որոնք ընդունվել են: Մասնավորապես՝ երկրորդ ընթերցմամբ և ամբողջությամբ ընդունվել է «Հայաստանի Հանրապետության ջրային օրենսգրքում լրացում կատարելու մասին», «Թափոնների մասին» ՀՀ

օրենքում լրացումներ կատարելու մասին», «Բուսական աշխարհի մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին» և «Կենդանական աշխարհի մասին» ՀՀ օրենքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերը, որոնց ընդունումը բխում է 2015 թվականի դեկտեմբերի 6-ին ընդունված ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի 2-րդ մասի դրույթների պահանջից, համաձայն որի ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտ ընդունելու լիազորություն կարող է նախատեսվել բացառապես օրենքով: Լիազորող նորմը պետք է սահմանված լինի օրենքով և համապատասխանի որոշակիության սկզբունքին:

Նախագծերով առաջարկվում է համապատասխան օրենքներում բնապահպանության բնագավառի պետական կառավարման լիազորված մարմնի իրավասություններին վերաբերող հոդվածներում ներառել այն իրավասությունները, որոնք գործող օրենսդրությամբ սահմանված են այլ իրավական ակտերում, հիմնականում ՀՀ կառավարության որոշումներում:

շարունակությունը էջ 51

• Նախագծերի մշակումը լայնանվարված է եղել նաև Բնապահպանության և ընդերքի Տեսչական մարմնի ստեղծմամբ

Սկիզբը՝ էջ 4 /

ՀՀ բնապահպանության նախարարի տեղակալը ներկայացրել է նաև «Բնապահպանական վերահսկողության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Հայաստանի հանրապետության ընդերքի մասին օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին», «Բնապահպանական իրավախախտումների հետևանքով կենդանական և բուսական աշխարհին պատճառված վնասի հատուցման սակագների մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին» և «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերը, որոնք նույնպես ընդունվել են: Օրենքների նախագծերի մշակումը պայմանավորված է եղել Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի ստեղծմամբ, որին տրվել են նաև ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության աշխատակազմի ընդերքի պետա-

կան տեսչությանը վերապահված լիազորությունները: Տեսչական մարմնի գործունեությունը օրենքին համապատասխան իրականացնելու նպատակով Հայաստանի Հանրապետության կառավարությունը տեսչական մարմնի ստեղծման մասին որոշմամբ հանձնարարական էր տվել մշակել և ներկայացնել փոփոխությունների փաթեթ: Նախագծերում ամրագրվել են Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի անվանումը, բնապահպանական պետական տեսուչների պաշտոնների անվանումները և վերանայվել են օրենքով ու օրենսգրքով ՀՀ բնապահպանության նախարարության աշխատակազմի բնապահպանական պետական տեսչությունը և ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության աշխատակազմի ընդերքի պետական տեսչությանը վերապահված լիազորությունները:

Տեղեկություններ աղօրինի ծառահասման «Էկոմասրուլի» ահազանգերի և «Դիլիջան» ազգային թարկում բռնկված հրդեհի դեղմերի մասին



Մարտի 20-ին «Դիլիջան» ազգային պարկի պահպանության բաժնի աշխատակիցները, հանրային մոնիտորինգ իրականացնող «Էկոպատրուլի» մասնակիցների

ահազանգի հիման վրա, արտահերթ ստուգայցի ընթացքում հայտնաբերել են անհայտ անձանց կողմից ապօրինաբար կուտակած հաճար տեսակի շուրջ 10 խ.մ. փայտանյութ: Փաստն արձանագրվել է «Հաղարծին տեղամաս» մասնաճյուղի 14-րդ պահաբաժնում: Դեպքի առնչությամբ «Դիլիջան» ազգային պարկի տնօրինության կողմից համապատասխան գրություն է ուղարկվել ՀՀ ոստիկանության Տավուշի մարզային վարչության Դիլիջանի բաժնին:

Իսկ Մարտի 18-ին ժամը 16-ի սահմաններում հրդեհ էր բռնկվել «Դիլիջան» ազգային պարկի «Հաղարծին տեղամաս» մասնաճյուղի եզրին գտնվող «Գյուլեր» կոչվող խոտհարքի տարածքում, ինչն արձանագրել էին պարկի տեսուչները: Արագ արձագանքելով ստացված տեղեկատվությանը՝ պարկի աշխատակիցների ուժերով հրդեհը նույն օրը ժամը 19-ի սահմաններում տեղայնացվել և մարվել էր: Այրվել էր 800 քառակուսի մետր չոր խոտածածկ տարածք:



Մեկ շաբաթում հաշվարկվել է 5.045.410 ՀՀ դրամի շրջակա միջավայրին հասցված վնաս



ԲՆԱԳԱՀԱՅԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԸՆԴԵՐՔԻ ՏԵՏՉԱՎԱՆ ՄԱՐՄԻՆ

**ИНСПЕКЦИОННЫЙ ОРГАН
ОХРАНЫ ПРИРОДЫ И НЕДР**

**ENVIRONMENTAL PROTECTION AND MINING
INSPECTION BODY**

ՀՀ ԲՆ բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի ստորաբաժանումների աշխատակիցների կողմից ս.թ. մարտի 12-ից 16-ն ընկած ժամանակահատվածում կատարված ստուգումների, շրջայցերի, հաշվետվությունների ընդունման, ինչպես նաև տեսչական մարմնին հանձնված վարչական

վարույթի քննության արդյունքում հայտնաբերվել և արձանագրվել է 23 իրավախախտում, 31-ի (23-ը՝ նախկինում հայտնաբերված) վերաբերյալ անցկացվել է վարչական վարույթի քննություն և նշանակվել 2.560.000 ՀՀ դրամի վարչական տուգանք: Վերոնշյալ ժամանակահատվածում բնապահպանական իրավախախտման հետևանքով շրջակա միջավայրին հասցված վնասի չափը կազմել է՝ 5.045.410 ՀՀ դրամ:



Մասնավորապես՝ Բուսական աշխարհի պահպանության ոլորտ.

Արձանագրվել է իրավախախտման 12 դեպք: Քննված վարչական վարույթներով նշանակվել է 2.150.000 ՀՀ դրամի վարչական տուգանք, հաշվարկվել 5.045.410 ՀՀ դրամի շրջակա միջավայրին հասցված վնաս, որից՝ Լոռի՝ ապօրինի ծառահատման 3 դեպքով (11 բոխի, 2 կաղնի) հաշվարկվել է 394.500 ՀՀ դրամի, վառելափայտի ապօրինի տեղափոխման 1 դեպքով (0.2 խմ փայտանյութ)՝ 7.200 ՀՀ դրամի շրջակա միջավայրին հասցված վնաս: Տավուշ՝ ապօրինի ծառահատման 6 դեպքով (7 հաճարենի, 7 բոխի, 14 կաղնի) հաշվարկվել է 3.793.750 ՀՀ դրամի շրջակա միջավայրին հասցված վնաս, որից 3 դեպքով հաղորդում է ներկայացվել իրավապահ մարմիններին: Վառելափայտի ապօրինի տեղափոխման 1 դեպքով (1.7 խմ փայտանյութ) հաշվարկվել է 61.200 ՀՀ դրամի շրջակա միջավայրին հասցված վնաս: Սյունիք՝ ապօրինի ծառահատման 1 դեպքով (1 բոխի, 1 կաղնի) նշանակվել է 100.000 ՀՀ դրամի վարչական տուգանք, հաշվարկվել 67.500 ՀՀ դրամի շրջակա միջավայրին հասցված վնաս: Նախկինում հայտնաբերված իրավախախտում՝ Լոռի՝ ապօրինի ծառահատման 5 դեպքով նշանակվել է 50.000-ական ՀՀ դրամի վարչական տուգանք, ընդամենը՝ 250.000 ՀՀ դրամ: Տավուշ՝ ապօրինի ծառահատման 10 դեպքով

նշանակվել է 1.000.000 ՀՀ դրամի վարչական տուգանք, 2 դեպքով հաշվարկվել է 721.260 ՀՀ դրամի շրջակա միջավայրին հասցված վնաս: Փայտանյութի ապօրինի տեղափոխման 8 դեպքով նշանակվել է 800.000 ՀՀ դրամի վարչական տուգանք:



Կենդանական աշխարհի պահպանության ոլորտ.

Արձանագրվել է իրավախախտման 3 դեպք: Գեղարքունիք՝ ձկան և խեցգետնի ապօրինի որսի 3 դեպք (առգրավվել է 112 հատ՝ 15.6 կգ կարաս տեսակի ձուկ, հանձնվել է Սևանի թիվ 1 Հեքիաթ մանկապարտեզ, 136 հատ՝ 2 կգ խեցգետնի բաց է թողնվել Սևանա լիճ, 31 հատ՝ 15 կգ սիգ տեսակի ձուկ հանձնվել է «Վարդենիսի նյարդահոգեբանական տուն-ինտերնատ» ՊՈԱԿ, 24 հատ՝ 10,5 կգ սիգ տեսակի ձուկ հանձնվել է «Գավառի մանկատուն» ՊՈԱԿ):



Մթնոլորտային օդի և ջրերի պահպանության, թափոնների տեղաբաշխման, հողերի օգտագործման և պահպանման ոլորտ.

Արձանագրվել է իրավախախտման 3 դեպք: Քննված վարչական վարույթներով նշանակվել է 210.000 ՀՀ դրամի վարչական տուգանք .Երևան՝ առանց անթափանց ծածկոցի շինարարական աղբի տեղափոխում, նշանակվել է 50.000 ՀՀ դրամի վարչական տուգանք, Լոռի՝ հողի օգտագործման կարգի խախտում և առանց թույլտվության արտադրական թափոնների տեղադրում, նշանակվել է 80.000 ՀՀ դրամի վարչական տուգանք, հողի օգտագործման կարգի խախտում, նշանակվել է 80.000 ՀՀ դրամի վարչական տուգանք:



Ընդերքի պահպանության ոլորտ.

Արձանագրվել է իրավախախտման 1 դեպք: Վայոց Ձոր՝ հրաբխային խարամի տեղափոխման 1 դեպքի վերաբերյալ վարչական իրավախախտման վարույթը գտնվում է քննության ընթացքում: Բնապահպանական և բնօգտագործման վճարների եռամսյակային հաշվարկ-հաշվետվությունները սահմանված ժամկետում չներկայացնելու համար կայացվել է վարչական տուգանքի 4 որոշում. Երևան՝ 3 տնտեսվարողի նկատմամբ նշանակվել է 50.000-ական ՀՀ դրամի վարչական տուգանք, ընդամենը՝ 150.000 ՀՀ դրամ:

Շիրակ՝ 1 տնտեսվարողի նկատմամբ նշանակվել է 50.000 ՀՀ դրամի վարչական տուգանք: Ընդհանուր առմամբ ՀՀ բնապահպանության նախարարության բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի պատժամիջոցներից հաշվետու ժամանակահատվածում ՀՀ պետական բյուջե է մուտքագրվել 749.040 ՀՀ դրամ:



**Գեոդարկերը ուրդես
Էկոսուրիզմի զարգացման
հզոր խթաններ**

ՅՈՒՆԵՍԿՕ-ի դասվիրակության շրջազայնությունները Հայաստանի մարզերում

2018 թ. մարտի երկրորդ կեսին, ՅՈՒՆԵՍԿՕ-ի «Համաշխարհային գեոպարկի ծրագրի» շրջանակներում, կազմակերպության բնական գիտությունների տնօրինության «Համաշխարհային գեոպարկ ծրագրի» ղեկավար Պատրիկ Մակ Կիվերն աշխատանքային այցով եղել է Հայաստանում:

Պատրիկ Մակ Կիվերնի և պատվիրակության այցի ընթացքում տեղի է ունեցել գեոպարկի ստեղծման վերաբերյալ աշխատաժողով (ԱՆԻ Պլազա հյուրանոց), որին մասնակցել են ՀՀ կառավարության, ՀՀ արտաքին գործերի, բնապահպանության, էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների, տնտեսական զարգացման և ներդրումների նախարարությունների, ՀՀ ԳԱԱ երկրաբանական գիտությունների, հնագիտության և ազգագրության ինստիտուտներից, Էկոլոգոնոսֆերային հետազոտությունների կենտրոնի, ինչպես նաև միջազգային կազմակերպությունների, օտարերկրյա դիվանագիտական ներկայացուցչությունների, հիմնադրամների, հասարակական կազմակերպություններից և և ԶԼՄ-ների 7 տասնյակից ավելի ներկայացուցիչ:

«Համաշխարհային գեոպարկի ծրագրի» իրագործումն ուղղակիորեն նպաստելու է էկոտուրիզմի խթանմանը և

կայուն զարգացմանը, որոնք հանդիսանում են ՀՀ կառավարության ծրագրի առաջնային ուղղություններ, ինչպես նաև խթանելու են համայնքներում սոցիալ-տնտեսական ծրագրերի իրականացմանը:

Աշխատաժողովի ավարտից հետո Պատրիկ Մակ Կիվերնը Բնապահպանության նախարարի տեղակալ Խ. Հակոբյանի և ՀՀ բնապահպանության նախարարի խորհրդատու Ս. Շահագիզյանի ուղեկցությամբ այցելել է Սյունիքի և Վայոց ձորի մարզեր: Մարզային այցելությունների ընթացքում ՅՈՒՆԵՍԿՕ-ի փորձագետները ծանոթացել են երկրաբանական և պատմական վայրերին, քայլել երկրաբանական, մշակութային արահետներով: Մարզերում ունեցած գիշերակացերը հնարավորություն են տվել համայնքներում ծանոթանալու տեղական արտադրանքին և ավանդույթներին, ինչը կարող է լավ նախադրյալ լինել Գեոպարկեր ստեղծելու համար: Պատրիկ Մակ Կիվերնի գլխավորած պատվիրակությունը ընդունել է նաև ՀՀ բնապահպանության նախարար Արծվիկ Մինասյանը: Հանդիպմանը քննարկվել են Հայաստանում գեոպարկեր ստեղծելու հնարավորություններին և այդ ուղղությամբ կատարվելիք քայլերին վերաբերող հարցեր:

Դենդրոպարկերի մշակույթի ձևավորումը Հայաստանում

Պատմական անհիշելի ժամանակներից ի վեր տարբեր թագավորություններ և տիրակալներ քաղաքաշինության և ամրոցաշինության հետ մեկտեղ մեծ ուշադրություն են դարձրել «Վանաչ շինարարությանը»՝ քաղաքային և քաղաքամերձ գոտիներում այգիներ և արհեստական անտառներ հիմնելու գործին: Հայ թագավորները համաժողովրդական գործ համարելով կանաչապատումը, ժողովրդի ջանքերով մայրաքաղաքների մեծ շենքերի շրջակայքում ստեղծել են անտառներ, պուրակներ, ծաղկանոցներ՝ արևաշատ Հայաստանում կլիման մեղմելու, շրջապատը գեղեցկացնելու նպատակով: Այդ գեղեցիկ ավանդույթները շարունակվեցին նաև Սովետական Հայաստանում: Դենդրոպարկերը բուսական աշխարհի պահպանության օբյեկտներ են, որոնք ստեղծվում են արհեստական պայմաններում, բաց գրունտում, որտեղ իրականացվում են տեղական և ներմուծված ծառափայլի բույսերի կենդանի հավաքածուների կլիմայավարժեցման, պահպանության և վերարտադրության աշխատանքներ: Այս աշխատանքները, բնականաբար, իրականացվում էին Պետության կողմից լիազորված մարմնի հաստատած կանոնադրության համաձայն: Ի տարբերություն բուսաբանական այգիների՝ դենդրոպարկերը ունեն ավելի գիտական և ուղղվածություն: Հայաստանում ստեղծված դենդրոպարկերը հանդիսացել են գիտափոփոխաններ, որտեղ անցկացվել են տարբեր գիտաժողովներ: Դենդրոպարկերի մշակույթի ձևավորումը Հայաստանում սկսվել է ավելի ուշ՝ 1930-ական թվականներին: Դրանց ստեղծումը Հայաստանում պայմանականորեն կարելի է բաժանել երկու փուլի՝ I փուլը 1930-ականների և II փուլը 1960-ականների սկզբում հիմնադրված դենդրոպարկեր: Առաջնաստեղծ դենդրոպարկերը հիմնվել են Լոռու մարզում, դա բացատրվում է մի քանի հանգամանքով, որոնցից երկուսը հետևյալն են՝ անտառային ֆոնդի հողերի առկայությունը և բարեպաշտ կլիմայական պայմանները, և երկրորդ Լոռու մարզի աշխարհագրական դիրքը, որը ավելի մոտ էր հարևան Կրասնանին, որտեղ բուսաբանությունը ավելի խոր արմատներ ուներ և պատահական չէր, որ այդ ժամանակահատվածում և մասնագետները հիմնականում կազմում էին Թիֆլիսի պրոֆեսորադասախոսական կազմի կորիզը: Հայաստանի առաջնաստեղծ դենդրոպարկերից են Վանաձորի և Ստեփանավանի «Սոճուտ» դենդրոպարկերը: Ստեփանավանի «Սոճուտ» դենդրոպարկը հիմնադրվել է 1933 թվականին, ազգությամբ լեհ ինժեներ-անտառագետ Էդմոնդ Լեոպոլդի Լեոնովիչը իր սեփական ծառափայլի բույսերի կենդանի հավաքածուի հիման վրա, ով դեկավարել է դենդրոպարկը 1934 թ-ից մինչև 1984 թվականը, մահացել է 1986 թվականին 84 տարեկան հասակում, ում աճյունը ամփոփված է դենդրոպարկի տարածքում: Ստեփանավանի «Սոճուտ» դենդրոպարկը 1984 թվականից մինչ օրս տնօրինում է Էդմոնդ Լեոնովիչի որդին՝ Վիտալի Լեոնովիչը, ով իր հոր գործի արժանի հետևորդն է: Դենդրոպարկը ընդգրկում է 35 հա տարածք, դենդրոպարկում աճում են շուրջ 483 ծառափատեսակներ, պարտիզային ձևեր, որոնցից միայն հա-

սուն ծառերը կազմում են 4446-ը: Հացորդ դենդրոպարկը, որին պետք է անդրադառնանք դա Վանաձորի «Վանաձոր», ներկայիս Վանաձորի «Սարուխանյան Ժ.-ի անվան» դենդրոպարկն է, որը հիմնադրվել է 1935 թվականին: Հարկ է նշել որ այդ ժամանակահատվածում կողք-կողքի հիմնադրվել է նաև Վանաձորի բուսաբանական այգին, որը գտնվում է ՀՀ ԳԱԱ Երևանի բուսաբանական այգու ենթակայության ներքո: Վանաձորի դենդրոպարկի, ինչպես նաև Վանաձորի բուսաբանական այգու հիմնադրման գործում մեծ ավանդ են ունեցել Գ.Դ. Յարոշենկոն, Պ.Դ. Յարոշենկոն, Լ.Բ. Մախատաձեն, Ա.Ա. Գրիգորյանը և Ռ.Ս. Աթաբեկյանը: Գործող դենդրոպարկերի մեջ Վանաձորի դենդրոպարկը իր զբաղեցրած տարածքով ամենափոքրն է, կազմում է 1,944 հա տարածք, բայց և այնպես չի զիջում իր ծառափայտեսակային բազմազանությանը: II փուլով ստեղծվել են Իջևանի և Բերդի «Սորաններ» դենդրոպարկերը Տավուշի մարզում 1962 թվականին, նույնպես անտառային ֆոնդի հողերում: Տավուշի մարզի Բերդ քաղաքի հարավային բարձունքում է գտնվում Բերդի «Սորաններ» դենդրոպարկը, որը հիմնադրվել է 1962 թ-ին և զբաղեցնում է 62 հատարածք: Դենդրոպարկի հիմնադրման գործում մեծ ավանդ է ունեցել անտառագետ Հ.Ա. Ավագյանը, ով նաև «Ջրվեժ» անտառայարկի հիմնադիրն է: «Սորաններ» դենդրոպարկի դենդրոֆլորան կազմված է շուրջ 30 ընտանիքի 73 ցեղի պատկանող 140 ծառափայտեսակներից (ըստ 2016թ.-ի կատարված գիտական ուսումնասիրությունների և ցուցակների լրամշակման արդյունքներով ստացված տվյալների): Իջևանի «Դենդրոպարկ»-ը նույնպես հիմնադրվել է 1962 թվականին: Դենդրոպարկի հիմնադիրն է Հայգիտաանտառ փորձակայանի տնօրեն, կենսաբանական գիտությունների թեկնածու Հայկ Մուշեղի Հախիճյանը և ավագ գիտաաշխատող, անտառային տնտեսության ինժեներ Գրիգոր Իվանի Աղաճյանցը, որոնց հետ միասին աշխատում էր նաև Լյուդվիգ Սայադյանը: Լյուդվիգ Սայադյանը համարվում է այդ շնորհալի գործի պահպանողը և շարունակողը: Իջևանի «Դենդրոպարկը» ներկայումս աշխարհի այլ աշխարհագրական շրջաններից ներմուծված ծառերի և թփերի տեսակային կազմով հանրապետությունում ամենահարուստներից է և զեղատեսիլը: Վերոհիշյալ բոլոր դենդրոպարկերը ստեղծման պահից մինչև 1990-ական թվականների վերջերը եղել են ինքնուրույն կազմակերպություններ, որոնք 1998 թ-ից միացել են «Արգելոցապարկային համալիր» պետական հիմնարկին, որն էլ 2002 թվականին վերակազմակերպվել է պետական ոչ առևտրային կազմակերպության, և մինչ օրս գտնվում են ՀՀ ԲՆ «Արգելոցապարկային համալիր» ՊՈԱԿ-ի ենթակայության ներքո: Դենդրոպարկերի մշակույթի զարգացումը Հայաստանում շարունակվում է մինչ օրս, 2017 թվականից սկսած տարվում են աշխատանքներ ՀՀ ԳԱԱ Վիկտոր Համբարձումյանի անվան Բյուրականի աստղադիտարանի հարակից այգում դենդրոպարկ հիմնելու նպատակով: Ինչպես արդեն գիտենք, որպես համատեղ աշխատանքի մեկնարկ՝ Բնապահպանության նախարար Արծվիկ Մինասյանը և ՀՀ ԳԱԱ Բյուրականի աստղադիտարանի տնօրեն Արեգ Միքայելյանը ստորագրել են համագործակցության համաձայնագիր: Կարելի է ենթադրել, որ առաջիկայում բոլորս ակամատեսը կլինենք մի նոր դենդրոպարկերի ստեղծմանը, ինչը վկայում է մեր երկրում այս սքանչելի մշակույթի զարգացման մասին:

Արթուր Խալաթյան
«Արգելոցապարկային համալիր» ՊՈԱԿ

Նախագիծը՝ Արծուն Դեղանյանի
խմբագիր՝ Սանվել Սևրջյան
Ձևավորումը՝ Նարինե Բաղդասարյանի
Նյութերը՝ ՀՀ ԲՆ Տեղեկատվության և հասարակության հետ կապերի վարչության

Հեռախոս՝
011 818 517